



Project funded by
EUROPEAN UNION



Anti-Littering Partnership for Green Rural Areas
GEORGIA ARMENIA MOLDOVA ROMANIA



Common borders. Common solutions



ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ և ԿՈՇՏ ԿԵՆՏՐԱՂԱՅԻՆ
ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ
2022-2026ԹԹ.



CROSS BORDER
COOPERATION



ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻԶԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ և ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ
ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ
2022-2026թթ.

ԴԻԼԻԶԱՆ 2022

Դիլիջան համայնքի Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեղական պլանը ստեղծվել է EU BSB 1138 «Գործընկերություն գյուղական կանաչ տարածքների աղտոտման դեմ» ծրագրի աշխատակազմի կողմից, Դիլիջան համայնքի ղեկավար **Դավիթ Սարգսյանի**, Դիլիջան համայնքի «Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ **Վանուշ Փիլոյանի** և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության պետ **Նարինե Ավետյանի** օժանդակությամբ:

EU BSB 1138 «APRA» ծրագրի ազգային համակարգող
Դիլիջանի Սահակյան

EU BSB 1138 «APRA» ծրագրի տեղական համակարգող
Ալբերտ Հարոյան

EU BSB 1138 «APRA» ծրագրի ԿԿԹ կառավարման փորձագետ
Տիգրան Օգանեզով

EU BSB 1138 «APRA» ծրագրի օգնական
Արմինե Հայրապետյան

ԴԻԼԻՋԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ



Դիլիջան խոշորացված համայնքի գործունեության հիմնական ուղղություններից են կանաչ տարածքների ընդլայնումը, բնական ռեսուրսների պահպանումը և օգտագործումը, թափոնների կառավարումը, տուրիզմի զարգացումը, որը սերտորեն առնչվում է բնապահպանական խնդիրներին:

ԿԿԹ-ի կառավարման խնդիրները Հայաստանում հանգեցնում են բազմաթիվ բնապահպանական,

սոցիալական և առողջապահական խնդիրների:

Դիլիջան համայնքի Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեղական պլանը, որն ստեղծվել է ԵՄ «Գործընկերություն գյուղական կանաչ տարածքների աղտոտման դեմ» ծրագրի շրջանակներում սերտ համագործակցությամբ, Դիլիջան համայնքի «Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության հետ, հնարավորություններ կստեղծի Դիլիջան խոշորացված համայնքի համար նպաստելու շրջակա միջավայրի որակի բարելավմանը և գյուղական վայրերում թափոնների կառավարման և շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկման ժամանակակից փորձի ներդրմանը:

Հուսով ենք, որ միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցության դեպքում, ոչ միայն կլուծվեն համայնքի ազգաբնակչության համար կենսական այս խնդիրները, այլև կընդլայնվեն համայնքի հնարավորությունները և ավելի լիարժեք կօգտագործվեն Դիլիջանի արժեքավոր բնական ռեսուրսները:

Դիլիջան համայնքի ղեկավար

Դավիթ Սարգսյան

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
2. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵՍԼԱԿԱՆ.....	6
2.1. Դիլիջանի ԿԿԹ կառավարման պլանը, օրենսդրական պահանջները, համապատասխանությունը երկրի ռազմավարական գերակայություններին	6
2.2. Թափոնների վերամշակման, այդ թվում՝ թափոնների վերականգնման ոլորտի ազգային օրենսդրություն, ազգային օրենսդրության մոտարկումը 2008/98 / EC Դիրեկտիվին:	8
3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	9
3.1. Պլանավորման տարածքի նկարագրություն.....	9
3.2. Աշխարհագրական սահմաններ.....	10
3.3. Ճնշումներ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա	11
3.4. Ազդեցություններ.....	12
3.5. Ժողովրդագրական տեղեկատվություն	12
4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ.....	13
5. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ.....	17
6. ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԿԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ	34
7. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ	36
7.1. Միջնաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում.....	40
7.2. Առանձին միջոցառումների մանրամասն աշխատանքային պլան և բյուջե	40
ՀԱՎԵԼՎԱԾ	41

Աղյուսակ 1. Դիլիջան համայնքի Աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարում

Պլանի անվանում	ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման 2022-2026թթ. պլան
Պլանավորման մեջ ընդգրկված համայնք, բնակավայր	ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնք (Դիլիջան քաղաք, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան գյուղեր)
Պլանավորման ժամանակաշրջան	2022-2026 թթ.
Ներկայացվող պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը	2024թ. սեպտեմբեր 2026թ. սեպտեմբեր
Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	Պլանը կազմվել է ԵՄ BSB 1138 APRA ծրագրի ԿՏԲԿ Հայաստան թիմի կողմից՝
Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոս	dshkhuhi.sahakyan@rec-caucasus.am (+374)91328584 toganezov@yahoo.com , (+374)91002011 albertharoyan@gmail.com , (+374)94763594 nune.harutyunyan@rec-caucasus.org , (+374)99575148 pil-van@mail.ru , (+37494834004) narine-avet@yandex.ru (+37410515142)
Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլեկտրոնային հասցե	

գերակայություններին, ՀՀ և ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթներին (մինչև 2022 թվականը մշակել թափոնների կառավարման պլաններ թափոնների հինգ ստորակարգության մասով):

Դիլիջանի ԿԿԹ կառավարման պլանի մշակման մեթոդաբանության սկզբունքն է ներդնել աղբահանության և կոշտ թափոնների կառավարման զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումը: Ընդ որում, Պլանը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը համահունչ և կիրառելի լինելով հանդերձ, պետք է սահմանի շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծման համատեքստում ընթացիկ և հեռանկարային թիրախներ՝ ներառելով թափոնների գործածության բոլոր բաղադրիչները:

Համաձայն այս մեթոդաբանության՝ Պլանը պետք է ներառվի ինչպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրերում, այնպես էլ ամենամյա աշխատանքային պլաններում: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար պլանավորման գործընթացի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է Պլանով սահմանված գործողությունների և թիրախների իրագործման արդյունքների գնահատում, ընթացիկ խնդիրների և խոչընդոտների վերլուծություն՝ մշտադիտարկում և հաշվետվողականություն, որը հնարավորություն կտա նախ բացահայտելու ընթացիկ Պլանում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև գնահատելու հաջորդ ժամանակահատվածի պլանավորումն իրականացնելու գերակայությունները և զարգացման ներուժը:

Աշխատանքների իրականացման ընթացքում ՀՀ և միջազգային/ԵՄ իրավական ակտերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում սանիտարական մաքրման և աղբահանության գործընթացը, կառավարումն ապահովող իրավական ակտերը հիմնականում թերի են, ունեն իրավական անհամապատասխանություններ, բացթողումներ և վերջիններիս գործնական կիրառման խնդիրներ: Իրավական ակտերում օգտագործված հասկացությունների սահմանումները կամ թերի են, կամ հստակ չեն: Սահմանված նորմերը, ստանդարտները և կանոնակարգերը հիմնված չեն գեներացված թափոնների քանակի, տեսակի և վերջիններիս կուտակման, տեղափոխման և տեղադրման վայրերի, ինչպես նաև տեղանքի ու սեզոնային առանձնահատկությունների և այլ բնութագրիչների վրա: Իրավական ակտերի հիմնական դրույթները վերաբերում են իրավունքների և պարտականությունների բաշխմանը պետական կառավարման տարբեր մակարդակների միջև, վճարների և լիցենզավորման վարչարարությանը:

Պլանի կազմման աշխատանքներում առաջնային են եղել ՀՀ «Թափոնների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքները, «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և

Ըստ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանում կան արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ՝ արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների՝ այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: Այս սահմանում տարբերվում է թափոնների մասին ԵՄ շրջանակային դիրեկտիվի 3-րդ հոդվածի սահմանումից, որում թափոն է համարվում ցանկացած նյութ կամ առարկա, որը տնօրինողը նետում է, մտադիր է կամ պարտավոր է նետել:


Համաձայն ՀՀ Թափոնների մասին օրենքի՝ Հայաստանում թափոնները դասակարգվում են ըստ առաջացման ձևի, ըստ ֆիզիկական վիճակի և ըստ վտանգավորության դասի:

Վանաձոր և Դիլիջան համայնքներում թափոնների դասակարգման մեթոդները նույնն են, ինչպես Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

3. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

3.1. Պլանավորման տարածքի նկարագրություն

Դիլիջանի տարածքում 19-րդ դարի 70-ական թվականներին կատարված հնագիտական հետազոտությունները ցույց են տվել, որ այստեղ մարդը սկսել է ապրել ուշ բրոնզե և վաղ երկաթե դարերից (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ- 1-ին հազարամյակի սկիզբ): Դամբարանադաշտեր են հայտնաբերվել Ռեդկին լազերի, Խրտնանոցի և Պապանինոյի տեղամասերում: Հայտնաբերված նյութերի մեծ մասը Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի Թբիլիսիի, Բաքվի և Երևանի թանգարաններում են, մի մասն էլ՝ Դիլիջանի երկրագիտական թանգարանում: Դիլիջանի հիմնադրման բուն տարեթիվը դեռևս հայտնի չէ: Ներկայիս Դիլիջանի տարածքը մտել է պատմական Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունի գավառի մեջ: 4-րդ դարում, երբ Հայաստանը բաժանվել է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, այդ հողերը (պատմական Հովք) մտել են Գուգարքի մարզի Չորափոր գավառի մեջ: Որպես հայոց թագավորների հանգստավայր և արքայական որսատեղի: Կապված պատմական իրադարձությունների հետ՝ քաղաքի տարածքի անվանումները և սահմանները մի քանի անգամ փոխվել են: 8-րդ դարում այդ տարածքները մտել են Կայենի գավառի կազմի մեջ, իսկ ավելի ուշ՝ Կուստ-Արցախյան նահանգի մեջ: 15-րդ դարից մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանի հետ միավորումը դրանք մտնում էին Գանձակի խանության մեջ: Այնուհետև դրանք մտել են Ելիզավետպոլի նահանգի մեջ:



Նկ. 1. Դիլիջան համայնքի գլխավոր հատակագիծը

Աղյուսակ 2. Դիլիջան համայնքի տարածքը

	Ընդհանուր տարածք	Քաղաքային	Գյուղական	Արդյունաբերական	Գյուղատնտեսական	Կանաչ, անտառային
Տարածքը (հա)	63316.93 հա	12056.95 հա	51259.98 հա	135.34 հա	23567.03 հա	32135.71 հա
Տարածքը տոկոսով ընդհանուրից (%)	100%	19.04 %	80.96 %	0.21 %	37.22 %	50.75 %

3.2. Աշխարհագրական սահմաններ

Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան մասում՝ Աղստև գետի հովտում՝ ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա, շրջապատված Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիսարևելյան մասերում նրան հարում են Բազումի, արևմտյան և հարավարևմտյան կողմերից՝ Փամբակյան արևելքից՝ Մուրղուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի լեռները: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք, վերջանալով լեռնային կատարների, փոխարինվում են ալպյան մարգագետիններով: Քաղաքը բարեկարգ ավտոմայրուղով կապված է մայրաքաղաք Երևանին (96 կմ), Վանաձորի և Իջևանի հետ (35-40 կմ): 1986 թվականից երկաթուղով կապված է Հանրապետության երկաթուղային ցանցին (Դիլիջան-Երևան հատվածը՝ 144 կմ): Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնաանտառային չափավոր գոլամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում՝ չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարինը՝ 0-ից -2: Օդի չորությունն առանձնապես արտահայտվում է ձմռան և գարնան ամիսներին: Օդի հարաբերական խոնավությունը 70% է տեղումների քանակը՝ 637 մմ, արևափայլի տևողությունը՝ 2091 ժամ:

Աղյուսակ 3. Կլիմայական պայմանները

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	637մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (0C)	0-ից -2
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (0C)	+18

Քաղաքի տարածքով հոսում է Աղստև գետը, որի գետավազանն ունի տուրիզմի առողջարանային ու ռեկրեացիոն գործունեության համար բարենպաստ կլիմայական պայմաններ և հարուստ անտառային ռեսուրսներ: Ավազանը, հանձինս Դիլիջանի անտառների, հանքային ջրի, մաքուր օդի, ինչպես նաև մյուս վայրերի անտառների, գետերի՝ Պարզ լճի, պատմաճարտարապետական բազմաթիվ կոթողների (Հաղարծինի, Գոշ վանական համալիրներ), ունի կուրորտային, հանգստյան ու զբոսաշրջության հսկայական պոտենցիալ, որը, սակայն, ներկայումս բավարար չափով չի օգտագործվում նաև կոշտ կենցաղային թափոններով գետի աղտոտվածության պատճառով:

3.3. Ճնշումներ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա


Ավազանի քաղաքներն ու գյուղերը չունեն պինդ թափոնների ու կեղտաջրերի դեմ պայքարելու ժամանակակից միջոցներ: Քաղաքներում չեն գործում կեղտաջրերի մաքրման կայաններ: Պինդ թափոնները կա'մ թափվում են, որտեղ հարմար է (հաճախ հենց գետի մեջ կամ գետափին), կա'մ էլ թաղվում են Դիլիջանի ու Իջևանի մոտակայքում գտնվող երկու աղբավայրերում: Երկու աղբավայրերն էլ գտնվում են Աղստև գետի ափին: Ներկայումս իրականացվող գյուղատնտեսական գործունեությունն ավազանում չի կարելի համար

արդյունավետ արտադրության խթանման համար քիմիական պարարտանյութերի ու գոմաղբի օգտագործման առումով:

3.4. Ազդեցություններ

Ջրային ռեսուրսների պլանավորման հիմնական քայլերից մեկն այն մարդածին ազդեցությունների որոշումն է, որոնք հանգեցնում են այնպիսի բացասական հետևանքների, որ միջամտելու կարիք է զգացվում: Աղստևի ավազանում վերլուծության արդյունքում ի հայտ են եկել գետի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող հետևյալ մարդածին գործունեության ձևերը.

1. կենցաղային կեղտաջրեր,
2. գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրություն,
3. կեղտաջրեր սննդի արդյունաբերության ձեռնարկություններից,
4. պինդ թափոններով աղտոտում:



Նկ. 2. Աղստև գետավազանը և ԿԿԹ հնարավոր աղտոտման աղբյուրները

3.5. Ժողովրդագրական տեղեկատվություն

Դիլիջան խոշորացած համայնքն ընդգրկում է Դիլիջան քաղաքը, Հաղարծին, Թեղուտ, Գոշ Հովք, Աղավնավանք և Խաչարձան բնակավայրերը:

Աղյուսակ 4. Դիլիջան համայնքի ժողովրդագրական տվյալներն ըստ բնակավայրերի

Դիլիջան խոշորացված համայնք և բնակավայրեր	Փաստացի գրանցված բնակվող (մարդ)	Տնտեսությունների թիվ	Բազմաբնակարան շենքերի թիվ	Բնակարանների թիվ
Ք.Դիլիջան	18608	4623	105	2874
Գ.Հովք	453	204	1	8
Գ.Գոշ	1115	411	1	8
Գ.Թեղուտ	1600	524	-	-
Գ.Խաչարձան	376	156	-	-
Գ. Հաղարծին	4081	1179	1	8
Գ. Աղավնավանք	342	204	-	-

4. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ենթաբաժնում ներկայացվում են պլանավորմանը նախորդող բազմաշահառու կողմեր հետ մի շարք քննարկումների արդյունքներով Պլանավորման տարածքում աղբահանության և կոշտ թափոնների կառավարման տեսլականը և նպատակները՝ հետևյալ ուղղություններով.

- հիմնախնդիրների բացահայտում,
- առաջնահերթությունների սահմանում,
- ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն,
- տեսլականի և նպատակների ձևակերպում:

Աղբահանության պլանավորման շրջանակներում հատկապես գոյացող թափոնների քանակ նվազեցման, տեսակավորման, վերամշակման, օգտահանման ծրագրեր և միջոցառումներ մշակելիս ու նախատեսելիս առանձնապես կարևորվել է թափոնների քանակի բաղադրության որոշումը:

Հայաստանում ընդհանրապես և Դիլիջանում մասնավորապես ուսումնասիրված չէ և չկա տեղեկություններ տարատեսակ թափոնների բաղադրության և քանակների վերաբերյալ, ինչ կարևորագույն բացթողումներից և խնդիրներից մեկն է:

ՀՀ տարածքում շենքերի և շինությունների ասբեստապատ տանիքները փոխարինվում են նորագույն շինարարական նյութերով, իսկ գոյացած թափոնները հեռացվում են կենցաղային

աղբավայրեր, որը ևս կարող է հանգեցնել մարդու առողջության հետ կապված խնդիրների: Նմանատիպ իրավիճակ է նաև սնդիկ պարունակող թափոնների առումով. կենցաղում և այլուր օգտագործվող ցերեկային լամպերը, որոնք պարունակում են սնդիկ, նույնպես թափվում են կենցաղային աղբավայրեր՝ հետագայում ներթափանցելով հողի և ջրի մեջ:

Չկան նաև հետազոտություններ աղբավայրերին հարող տարածքներում ապրող բնակչության առողջության պահպանման վերաբերյալ, քանի որ բնակչությունը գտնվում է աղբավայրերի խիստ անբարենպաստ ազդեցության տակ: Մթնոլորտային օդն աղտոտված է աղբավայրերի վառվելու և ծխալու հետևանքով օդ արտանետված գազերով՝ հիմնականում ծծմբի և ածխածնի օքսիդներով, դիօքսիդներով և ֆուրաններով և չի բացառվում նաև՝ ֆոսգենով: Նույն կերպ է ազդում նաև աղբավայրը ջրերի և հողի վրա՝ աղտոտելով այն քիմիական նյութերով, վարակիչ հիվանդությունների հարուցիչներով և այլն:

ա) Գոյացող թափոնների քանակի ընդունված ցուցանիշներն են.

- ✓ մեկ տարում գոյացող թափոնների ընդհանուր զանգվածը (տոննա/տարեկան կամ խ.մ/տարեկան),
- ✓ մեկ տարում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/տարի կամ մարդ/խ.մ/տարի),
- ✓ մեկ օրում գոյացող թափոնների կշիռը մեկ բնակչի հաշվով (մարդ/կգ/օր կամ մարդ/խ.մ/օր):

Բաղադրությունն ընդունված է ներկայացնել տոկոսով՝ ըստ յուրաքանչյուր բաժնեմասի ընդհանուր զանգվածի չափաբաժնի:

Պլանի մշակման և իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է հավաքագրվող տեղեկատվությունից, որը պետք է լինի հստակ, ճշգրիտ, պարբերական, տվյալները պետք է հավաքագրվեն համայնքի/բնակավայրի տարբեր հատվածներից, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողներից, տարվա տարբեր եղանակներին՝ մեկ շնչի հաշվով առաջացող աղբի կշիռը, բաղադրությունը, դրանց հնարավոր փոփոխությունները՝ ըստ սեզոնի և ժամանակահատվածի:

Տեղեկատվության հավաքագրումը և ճշգրիտ գնահատումը հնարավոր է հստակ մեթոդաբանությամբ և պարբերականությամբ նմուշառման և դրա արդյունքների վերլուծության պարագայում: Ընդ որում, նմուշառման պարբերականությունը թափոնների կառավարման համակարգի ներդրման սկզբնական փուլում պետք է լինի տարվա բոլոր եղանակներին՝ թափոնների գոյացման ինտենսիվության գործոններից կախված, իսկ հետագա տարիներին կարելի է նմուշառում իրականացնել որոշակի գործոնների փոփոխությունից կախված, ավելի փոքր պարբերականությամբ:

բ) Թափոնների բաղադրության հիմնական տեսակները/հոսքերը

- ✓ **Կոշտ կենցաղային թափոն**՝ աղբամաններում կուտակվող կոշտ կենցաղային թափոն՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված թափոն:
- ✓ **Խոշոր եզրաչափի թափոն**՝ իսկ և ավել ծավալով թափոն, որը չի տեղադրվում աղբամանում:
- ✓ **Շինարարական աղբ**՝ քաղաքաշինական և շինարարական գործունեության հետևանքով առաջացող աղբ:
- ✓ **Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն:**
- ✓ **Փաթեթավորման թափոն**՝ կոմերցիոն գոտում գոյացող փաթեթավորման թափոն:
- ✓ **Էլեկտրական և էլեկտրոնային թափոն (ԷԷՍ)**՝ չշահագործվող սարքավորում, սնուցվում է էլեկտրական ցանցից կամ մարտկոցից:
- ✓ **Կենսաբանական թափոն**՝ կենդանական ծագման պարենային և ոչ պարենա հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական թոչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ:
- ✓ **Պարտեզային թափոն**՝ այգիներից, պուրակներից և այլ կանաչ տարածքներից հավաքված թափոն, այդ թվում՝ էտման թափոն, տերևներ և այլ նմանատիպ թափոններ:
- ✓ **Անվադողեր**՝ մարդատար, բեռնատար մեքենաների և հեծանիվների շահագործումից դուրս եկած անվադողեր:
- ✓ **Վտանգավոր թափոն** (բացի ԷԷՍ թափոնից)՝ ներկեր, քիմիկատներ, դյուրակ հրդեհեցիկ, բժշկական թափոն և այլն, հնարավոր ցանկը ներկայացված է հավելվածում:

Պլանավորման տարածքում ներկայացվում է թափոնների բաղադրությունը՝ տոկոսներով ըստ ընդհանուրի: Աղյուսակ 6-ի II-րդ բաժնի պլանակը լրացվում է, եթե իրականացվել է թափոնների բաղադրության մանրակրկիտ ուսումնասիրություն:

Այս, ինչպես նաև այլ ծրագրերի շրջանակներում, Դիլիջան համայնքի համար թափոնների բաղադրության ուսումնասիրություն չի իրականացվել, կամ նրանք շատ մոտավոր են, ուստի փաստենք, որ նրանց բացակայության կամ ոչ հստակ և հավաստի լինելը հիմնական կարող է ազդել վերլուծության որակական և քանակական նկարագրերի վրա:

Ստորև բերված տվյալները հավաքագրվել են ԵՄ BSB 1138 APRA ծրագրի շրջանակներում համայնքում առանձնացված աղբահանության աջակցության նպատակով տեղադրված արկղերի պարունակության վերլուծությունից:

Աղյուսակում նշված են միայն հավաքագրված թղթի և պլաստիկի մոտավոր քանակները:

Աղյուսակ 5. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները	Քանակ	Նշումներ
Բնակելի նպատակային նշանակության շինություններ	7412	
- Բազմաբնակարան բնակելի շենքեր	108	
- Անհատական բնակելի տներ	7304	
Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ	409	
- Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ	230	
- Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ	103	
- Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ	30	
- Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ	18	
- Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ	40	
- Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն	Տվյալները բացակայում են	

Աղյուսակ 6. Գոյացած կոշտ թափոնների բաղադրությունն ըստ տեսակների (%)

I Թափոնի տեսակը	%	II Թափոնի տեսակը՝ մանրակրկիտ բաղադրության ուսումնասիրության դեպքում	%
Օրգանական		Խոհանոցային	
		Այգիներից, պուրակներից և այլ կանաչ տարածքներից	
Թուղթ և ստվարաթուղթ	0.226 %		
Պլաստիկ	0.197%	Պլաստիկ շէեր	
		Պոլիէթիլենային փաթեթավորումներ	
		Պլաստիկ տարաներ	
Ապակի			
Մետաղ			
Այլ թափոն		Էլեկտրական	
		Տեքստիլ	
		Փայտ	
		Վտանգավոր	
		Այլ	

Աղյուսակ 5. Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակը և քանակը

Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները	Քանակ	Նշումներ
Բնակելի նպատակային նշանակության շինություններ	7412	
- Բազմաբնակարան բնակելի շենքեր	108	
- Անհատական բնակելի տներ	7304	
Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ	409	
- Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ	230	
- Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ	103	
- Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շինություններ	30	
- Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ	18	
- Գիտակրթական, մշակութային և զբոսայգային նշանակության շինություններ	40	
- Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեություն	Տվյալները բացակայում են	

Աղյուսակ 6. Գոյացած կոշտ թափոնների բաղադրությունն ըստ տեսակների (%)

I Թափոնի տեսակը	%	II Թափոնի տեսակը՝ մանրակրկիտ բաղադրության ուսումնասիրության դեպքում	%
Օրգանական		Խոհանոցային	
		Այգիներից, պուրակներից և այլ կանաչ տարածքներից	
Թուղթ և ստվարաթուղթ	0.226 %		
Պլաստիկ	0.197%	Պլաստիկ շշեր	
		Պոլիէթիլենային փաթեթավորումներ	
		Պլաստիկ տարաներ	
Ապակի			
Մետաղ			
Այլ թափոն		Էլեկտրական	
		Տեքստիլ	
		Փայտ	
		Վտանգավոր	
		Այլ	

5. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Աղբահանության կառավարման համակարգում պլանավորում իրականացնելիս կարևոր հստակ պատկերացում ունենալ թափոնների գործածության բոլոր փուլերի մասին՝ թափոն առաջացումից մինչև վերամշակման կամ օգտահանման արդյունքում երկրորդային օգտագործում կամ վերացում/ոչնչացում, կամ տեղադրում աղբավայրում, յուրաքանչյուր հաջորդական փուլում թիրախ սահմանելու հնարավորություններն ու խոչընդոտները վերլուծելու նպատակով:

Պլանի մշակման մեջ օգտագործվող թափոնների գործածության ձևերը և դրանց նկարագրությունները բերվում են ստորև՝ թիվ 7 աղյուսակում:

Դիլիջան համայնքում բաղադրության ուսումնասիրություն և առանձնացված հավաքում իրականացվում, բացառություն է կազմում միայն պլաստիկի և թղթի/ստվարաթղթի հավաքագրումը, որն իրականացվում է 2021թ.-ից: Համայնքում տեղադրված են պլաստիկ կուտակման/հավաքման 15 արկղեր՝ 1.1 մ³ ծավալով (12-ը տրամադրվել է EU BSB 1138 ծրագրի շրջանակներում, իսկ 3-ը՝ համայնքի ուժերով):

Աղբի ընդհանուր հաշվառումն իրականացվում է ըստ ծավալի (մ³-ով), ուստի ամփոփաստաթղթում բոլոր առկա տվյալները ներկայացված են ծավալով: Վերլուծություններ համար հիմք են հանդիսացել միայն աղբի հավաքագրման՝ 2021թ.-ի տվյալները, մինչև 2021 տվյալները բացակայում են:

Աղյուսակ 7. Թափոնների գործածության ձևերի նկարագիր

	Թափոնների գործածության ձև	Նկարագրություն
I	Խառը, չտեսակավորված հավաքում և տեղափոխում	Թափոնների խառը հավաքում և հեռացում օպերատորի կողմից դեպի աղբավայր կամ տեսակավորման կենտրոն: Ինչպես նաև թափոն առաջացնողի կողմից աղբի ինքնափոխադրում դեպի տեսակավորման կենտրոն
II	Թափոնների տեսակավորված հավաքում և տեղափոխում	Սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորված հավաքում կամ թափոն առաջացնողի կողմից տեղափոխում դեպի տեսակավորման կենտրոն
III	Թափոնների վերաօգտագործում և վերակիրառում	Ապրանքի բազմակի օգտագործում՝ ի սկզբանե նախատեսված (օրինակ՝ ապակե շիջված ստվարաթղթե տուփ և այլն): Ինչպես նաև, երբ առանձանց համար անցանկալի, ոչ պիտան

		նյութերը դրվում են տնտեսական շրջանառության մեջ այլ նպատակներով:
IV	Թափոնների վերամշակում և օգտահանում	Երբ տեխնոլոգիական գործընթացների արդյունքում փոխվում են թափոնների ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները, և դրանք օգտագործվում են որպես երկրորդային նյութ - վերամշակման միջոցով կենսազազի, բրիկետների, պելետի, բիոդիզելի, այլ վառելիքի ստացում - սննդային թափոնների աերոբ մշակման (կոմպոստացման) միջոցով պարարտանյութի ստացում կամ չեզոքացում - ջերմային մշակման (կիզման) միջոցով ջերմային կամ էլեկտրական էներգիայի ստացում
IV	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում /	Թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով
VI	Թափոնների տեղադրում ոչ սանիտարական աղբավայրում	Տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբավայրում
VII	Տեղադրում սանիտարական աղբավայրում	Տեղադրում քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխանող աղբավայրում

Աղյուսակ 8. Այս ենթաբաժնում 1.3, 1.4 և 1.5 ենթաբաժիններում ներկայացված տեղեկատվությունը հիման վրա կազմվում է ամփոփ տեղեկատվական աղյուսակ՝ ըստ թափոնների քանակի, տեսակի և գործածության ձևերի

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի	Թափոնների գործածության ձևեր						
			I	II	III	IV	V	VI	VII
			Խառը հավաքում (%) ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (%) ընդհանուր քանակից)	Վերաօգտագործում /կրկնօգտագործում (%) ընդհանուր քանակից)	Վերամշակում և/կամ օգտահանում (%) ընդհանուր քանակից)	Վտանգավոր թափոնների չեզոքացում /վնասագերծում (%) ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտար, աղբավայրում (%) ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտար, աղբավայրում (%) ընդհանուր քանակից)
Կոշտ կենցաղային թափոն	0.67	17733	99.577	0.423 (0.226% կամ 40 մ ³ թուղթ/ստվարաթուղթ և 0.197% կամ 34 մ ³ պլաստիկ)	Տվյալ չկա	Տվյալ չկա	Տվյալ չկա	Տվյալ չկա	Տվյալ չկա

Համաձայն թափոնների տեսակավորման դասակարգման՝ առանձնացվում են հետևյալ տեսակները և հաշվառման ձևերը.

- Խոշոր եզրաչափերի թափոն** - խոշոր եզրաչափերի թափոնը հիմնականում հեռացվում է տնտեսավարողների կողմից:
Հաշվառում չի իրականացվում:
- Շինարարական աղբ** - հիմնականում հեռացվում է տնտեսավարողների կողմից:
Հաշվառում չի իրականացվում:
- Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն** - հիմնականում հեռացվում է տնտեսավարողների կողմից:
Հաշվառում չի իրականացվում:
- Անվաղողեր** - հիմնականում հեռացվում է տնտեսավարողների կողմից:
Հաշվառում չի իրականացվում:
- Փաթեթավորում և փաթեթվածք** - հիմնականում հեռացվում է տնտեսավարողների կողմից:
Հաշվառում չի իրականացվում:
- Էլեկտրական և էլեկտրոնային թափոն**
Հաշվառում չի իրականացվում:

7. Կենսաբանական թափոն

Հաշվառում չի իրականացվում:

8. Վտանգավոր թափոններ

Հաշվառում չի իրականացվում:

Դիլիջան համայնքում աղբի հաշվառումն իրականացվում է ըստ ծավալի՝ համապատասխան կշեռքների բացակայության պատճառով:

Աղյուսակը ցույց է տալիս, որ Դիլիջան համայնքում տարեկան առաջացած (2021թ.-ի տվյալներ).

- ✓ 17733 մ³ կոշտ կենցաղային թափոն, որի 99,577%-ը հավաքվում է խառը և ամբողջությամբ տեղադրվում ոչ սանիտարական աղբավայրում (համայնքին սպասարկող սանիտարական աղբավայր դեռևս չկա), 0,423 %-ը (0,226% կամ շուրջ 40 մ³ թուղթ/ստվարաթուղթ և 0,197% կամ շուրջ 34 մ³ պլաստիկ) հավաքվում է տեսակավորված:
- ✓ Վերաօգտագործման /կրկնօգտագործման, վերամշակման/օգտահանման մասին տվյալները բացակայում են (հաշվառում չի իրականացվում): Վտանգավոր թափոնների չեզոքացում/ վնասագերծում չի իրականացվում: ԿԿԹ-ի ամբողջ ծավալը, բացառությամբ տեսակավորվածի, տեղափոխվում է համայնքի ոչ սանիտարական աղբավայր, որը գտնվում է Հաղարծին բնակավայրի վարչական տարածքում: Հավաքագրված տեսակավորված թափոնները՝ պլաստիկը և թուղթ/ստվարաթուղթը, տեղափոխվում են ՀՀ այլ համայնքներում գործող վերամշակման գործարաններ:
- ✓ Խոշոր եզրաչափի թափոնը հիմնականում տեղափոխվում է տնտեսվարողների և բնակիչների կողմից համայնքի ոչ սանիտարական աղբավայր: Հաշվառում չի իրականացվում:
- ✓ Շինարարական աղբը, որը չի տեղափոխվում ԿԿԹ-ի հետ խառը հավաքման արդյունքում, հեռացվում է տնտեսվարողների և բնակիչների կողմից համայնքի ոչ սանիտարական աղբավայր: Հաշվառում չի իրականացվում:
- ✓ Անվադողերը հիմնականում տեղափոխվում են տնտեսվարողների և բնակիչների կողմից համայնքի ոչ սանիտարական աղբավայր: Հաշվառում չի իրականացվում: Սակայն ենթադրվում է, որ անվադողերի մի մասը հավաքվում է բնակիչների ու տնտեսվարողների կողմից և տեղափոխվում/հանձնվում է պաշտպանական ինժեներական ենթակառուցվածքներին՝ վերակիրառման նպատակով:
- ✓ Փաթեթավորման և փաթեթվածքի թափոնի հաշվառում չի իրականացվում:
- ✓ Էլեկտրական և էլեկտրոնային թափոնի հաշվառում չի իրականացվում:

Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համար կարևոր է, որ մանրամասնորեն նկարագրվեն և գնահատվեն թափոնների գործածության առանձին փուլերը, դրանց համա անհրաժեշտ կարողությունները, ենթակառուցվածքները և ռեսուրսները, ինչպես նաև դրանցում ներգրավված դերակատարների դերը, իրավասության շրջանակները պատասխանատվության չափը: Անհրաժեշտ է նաև նկարագրել և գնահատել թափոնների գործածության առանձին փուլերը, դրանց համար անհրաժեշտ կարողությունները ենթակառուցվածքները և ռեսուրսները, ինչպես նաև դրանցում ներգրավված դերակատարների դերը, իրավասության շրջանակները և պատասխանատվության չափը:

ա) Աղբահանություն և կոշտ կենցաղային թափոնների հավաքում

ՀՀ Դիլիջան համայնքում աղբի հավաքումը կատարվում է՝

- ✓ փողոցներում և բակերում տեղակայված աղբամաններից,
- ✓ բնակելի տներից (Դիլիջանի մեկ թաղամասից) և կազմակերպությունների գրաֆիկով կամ անհրաժեշտության դեպքում պատվերով եկող աղբատարներից,
- ✓ ինքնափոխադրմամբ, երբ թափոն գոյացնողը կազմակերպում է թափոն փոխադրումը աղբավայր, տեսակավորման, վերամշակման, օգտահանման կենտրոններ:

Աղյուսակ 9. Թափոնների հավաքման մեթոդները

Թափոնների հավաքման մեթոդ	Ծառայությունից օգտվող բնակչություն (%)	Տեսակավորված հավաքում (մ³)	Տեսակավորված հավաքում (%)	Չտեսակավորված հավաքում (մ³)	Չտեսակավորված հավաքում (%)	Նշում
Աղբամաններից	շուրջ 90%	74 մ³	0,423	17733	99.773	Առանձին կազմակերպություններ կազմակերպում են թափոնների հավաքումը:
Գրաֆիկով՝ տնից կամ կազմակերպությունից	շուրջ 10%	(40 մ³ թուղթ/ստվարաթուղթ և 34 մ³ պլաստիկ)	0,226% կամ 40 մ³ թուղթ/ստվարաթուղթ և 0,197% կամ 34 մ³ պլաստիկ)			
Պատվերով՝ տնից կամ կազմակերպությունից	շուրջ 0.1%					
Ինքնափոխադրում	Տվյալները բացակայում են					

բ) Աղբահանություն իրականացնող օպերատորներ

Դիլիջան խոշորացված համայնքում գործում է միայն մեկ օպերատոր՝ «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ

Աղյուսակ 10 Սպասարկում (պարտադիր)

Օպերատորի անվանում	Սպասարկվող համայնքներ/ բնակավայրեր	Սպասարկվող տարածքի բնակչության թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների տեսակը, տարողությունը (բաց/փակ թափքով, կոմպակտորեն)	Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ, թուղթ..., շինարարական և այլն հավաքում	Օպերատորի աշխատանքի գնահատական (1-ից 5)	Նշումներ
«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ	Դիլիջան համայնք (ք. Դիլիջան, գ. Հովք, գ. Գոշ, գ. Թեղուտ, գ. Խաչարձան, գ. Հաղարծին և գ. Աղավնավանք)	26575	3	2 հատ Kamaz KO-449 տեսակի կոմպակտոր և 1 հատ Газ KO-440 տեսակի կոմպակտոր	խառը, տեսակավորված պլաստիկ և թուղթ:		

գ) Աղբի տեղափոխման սխեմաներ

Սույն ենթաբաժնում նկարագրված է համայնքում աղբահանության պլանավորման մեխանիզմը:

Դիլիջան խոշորացված համայնքում կանոնակարգված աղբահանություն և հաշվառում իրականացնում է միայն «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ը: ՀՈԱԿ-ը իրականացնում է միայն ԿԿԹ-ի հեռացում դեպի Հաղարծին բնակավայրի վարչական տարածքում գտնվող ոչ սանիտարական աղբավայր: Դիլիջան համայնքում առկա է նաև փակված ոչ սանիտարական աղբավայր, որը գտնվում է Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհին:

Տնտեսվարողների/բնակիչների կողմից ինքնուրույն հեռացվող շինարարական աղբը հիմնականում տեղափոխվում է Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհին գտնվող փակված աղբավայր: Փոխաբեռնման կայաններ, տեսակավորման կենտրոններ, գործածության կայանքներ, վերամշակման գործարանները համայնքում բացակայում են:

Աղյուսակ 11. ԿԿԹ-ի տեսակները

Թափոնի տեսակ	Հեռավորություն մինչև աղբավայր, կմ	Հեռավորություն մինչև փոխաբեռնման կայան, կմ	Հեռավորություն մինչև տեսակավորման կենտրոն, կմ	Հեռավորություն մինչև այլ գործածության կայանք./վերամշակման գործարան և այլն / կմ	Նշումներ
Կոշտ կենցաղային թափոն	ք.Դիլիջան՝ 16,5 կմ գ.Հովք՝ 11 կմ գ.Գոշ՝ 7,5 կմ գ.Թեղուտ՝ 7,8 կմ գ.Խաչարձան՝ 9,5 կմ գ.Հաղարծին՝ 4,5 կմ գ.Աղավնավանք՝ 12 կմ	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Տվյալն բացակասում է

Խոշոր եզրաչափերի թափոն

Շինարարական աղբ

Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն

Անվադողեր

Փաթեթավորում և փաթեթվածք

Էլեկտրական և էլեկտրոնային թափոն

Թափոնների այս տեսակների առնչությամբ չկա առկա տեղեկատվություն:

դ) Վերաօգտագործում և նախապատրաստում վերաօգտագործման կամ վերակիրառ համար

Թափոնների կայուն կառավարում և արդյունավետ պլանավորում իրականացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել թափոնների վերաօգտագործման հնարավորությունները և նշել այն արտադրողներին, որոնք իրականացնում են իրենց արտադրանքի բաղադրիչների (տարա, փաթեթավորում և այլն) վերադարձ՝ կրկնակի օգտագործելու նպատակով (օրինակ՝ հյութերի, կաթնամթերքի ապակե տարաների վերադարձ գործարան): Վերաօգտագործման արժեշդթայում կարևոր են նաև համապատասխան ապրանքները նախապատրաստող կետերը, որոնք իրականացնում են վերանորոգման աշխատանքներ՝ կահույքի, կենցաղային տեխնիկայի, շինարարական բաղադրիչների, հագուստի, կոշիկի և այլն:

զ) Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում

Այս ենթաբաժնում նկարագրվում է ոչ ֆորմալ հատվածի կողմից իրականացվող թափոն տեսակավորման և օգտահանման գործունեությունը, ինչպես աղբավայրերում, այնու աղբամաններից, բակերից, խանութների տարածքներից և այլն:

Աղյուսակ 12. Տեսակավորվող թափոնները

Տեսակավորվող թափոնի տեսակ	Հավաքվում է ընդունման կետում (այո/ոչ)	Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ)	Հավաքվում է սպասարկման օբյեկտներից (այո/ոչ)	Հավաքվում է աղբավայրերում (այո/ոչ)
Ապակի	ոչ	այո	ոչ	այո
Պլաստիկ	ոչ	այո	ոչ	այո
Մետաղ	այո	այո	ոչ	այո
Թուղթ	ոչ	այո	ոչ	ոչ
Ավտոմեքենայի մարտկոց	ոչ	այո	ոչ	այո
Այլ թափոններ /նշել/				

բ) Աղբավայրեր և աղբանոցներ

Այս ենթաբաժնում նկարագրվում են պլանավորման տարածքում առկա բոլոր աղբավայրերը/աղբանոցները, ինչպես նաև պլանավորման տարածքից դուրս գտնվող այն աղբավայրերը, որոնք սպասարկում են պլանավորման տարածքում գտնվող համայնքները և բնակավայրերը:

Աղյուսակ 13. Աղբավայրերը

Աղբավայր /գտնվելու վայրը/	Շահագործող համայնքներ /բնակավայրեր	Աղբավայրի մակերես, հա	Տեղադրվող աղբի տեսակ	Ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/	Մեփական ության /օգտագործման իրավունք	Շահագործողի անվանում	Աղբի տեղադրման վճարը /ՀՀ դրամ/տոննա	Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհի ահատվածի վիճակը
Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայր	ք.Դիլիջան, գ.Հովք, գ.Գոշ, գ.Թեղուտ, գ.Նաչարձան, գ.Հաղարծին, գ.Աղավնավանք:	3.27799 հեկտար	ԿԿԹ խառը	Դիլիջան համայնքի ղեկավարի որոշում թիվ 288-Ա 15.09.2016թ. (գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ)	Մեփական ության վկայական	Դիլիջան համայնք	Վճարի չափ չի սահմանվել (պետք է ճշտել)	Գրունտային և վատ վիճակ
Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհին	Զի շահագործվում		Զի շահագործվում	Հիմքերը բացակայում են	Հիմքերը բացակայում են	Զի շահագործվում		Գրունտային և վատ վիճակ

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Դիլիջան համայնքում, ըստ թափոնների քանակ տեսակների և գործածության ձևերի, նրանց կրկնակի օգտագործման և վերաօգտագործման վերակիրառման համար նախապատրաստման, ինչպես նաև թափոնների ոչ ֆորմ տեսակավորման և օգտահանման առնչությամբ առկա տեղեկատվությունը բացակայում կամ առկա են տվյալներ սոսկ ծրագրերի շրջանակներում իրականացված տվյալների հավաք շրջանակում:

Առկա չէ նաև տեղեկատվություն Թափոնների գործածության կայանքների առկայության տեղադրման վայրերի, նրանց հզորությունների վերաբերյալ:

Մինչդեռ թափոնների կայուն կառավարում և արդյունավետ պլանավորում իրականացնել համար անհրաժեշտ են հավաքագրված իրական տվյալներ, կանխատեսվող գործողությունների լիարժեք նախատեսման, ինչպես նաև նրանց իրականացման ժամանակացույցի կազմման համար:

Պլանի նպատակային մշակման և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նաև հստակ սահմանել Պլանում այս կամ այն կերպ ներգրավված անձանց՝ շահակիրների, պատասխանատուների, իրականացնողների միջև պատասխանատվության շրջանակները: Պլանով նախատեսված տարբեր գործողություններ և թափոնների գործածության տարբեր փուլեր ենթադրում են տարբեր պատասխանատուներ և շահակիրներ:

Կարևորագույն բաղադրիչ է նաև իրազեկվածության բարձրացման գործունք:

Առկա տվյալները ցույց են տալիս, որ իրազեկվածության բարձրացման ծրագրի իրականացում են ՏԻՄ-ը և քաղաքացիական կազմակերպությունները /ՀԿ-ները և այլ աղբի չտեսակավորված հավաքման համար պատասխանատու է ՏԻՄ-ը, ի դեմս «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի, տեսակավորված հավաքման համար՝ քաղաքացիական կազմակերպությունները՝ 20% և ՏԻՄ-ը, ի դեմս «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ը՝ 80%: Վերաօգտագործում, վերամշակում և վտանգազերպման թափոնների վնասագերծում համայնքում չի իրականացվում: Աղբավայրում տեղադրված իրականացում է աղբավայրը շահագործող ՏԻՄ «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ը:

Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ շահակիրների ներգրավվածությունն ըստ թափոնների տեսակների գործածության

Այս ենթաբաժնում ներկայացրել ենք թափոնների հիմնական տեսակների կառավարման համապատասխան փուլում ներգրավված դերակատարներին: Դերակատարների ներկայացված են 4 խմբով.

- ՏԻՄ

- Մասնավոր հատված /ՄՀ/,

- Բնակիչներ /ԲՆ/,

- Քաղաքացիական հասարակական կազմակերպություն /ՔՀԿ/:

Դրա հետ մեկտեղ, եթե գործում է արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) սխեման, ապա համապատասխան վանդակում պետք է նշվի նաև ԱԸՊ: Օրինակ, եթե փաթեթավորման որոշ թափոնների դեպքում Պլանավորման տարածքում գործում է ԱԸՊ, իսկ մնացած փաթեթավորման թափոնների հավաք կազմակերպում է ՏԻՄ-ը. ապա 17-րդ աղյուսակի համապատասխան վանդակում պետք է նշել՝ ՏԻՄ, ԱԸՊ:

Այս խնդրում հաջողությունների գրանցման համար անչափ կարևոր կլինի **Անձնակազմի կարողությունների գնահատումը**.

Արդյունավետ պլանավորման համար կարևոր է հստակ գնահատել Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման մեջ ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան անձնակազմի կարողություններն ըստ անհրաժեշտ հմտությունների մակարդակի: Այստեղ վերլուծության համար հիմք կարող է հանդիսանալ նոր մշակված Մեթոդաբանության 2-րդ բաժնում պլանավորման զարգացմանն ուղղված միջոցառումների և նպատակների բացահայտումը:

Գնահատման համար թիրախ պետք է հանդիսանան.

- ✓ թափոնների կառավարման գիտելիքները,
- ✓ ՀՀ օրենսդրության իմացությունը,
- ✓ տվյալների հավաքագրումը,
- ✓ համակարգչային քարտեզագրումը,
- ✓ գնումների կազմակերպումը,
- ✓ պայմանագրերի կառավարումը,
- ✓ գործառնական հմտությունները,
- ✓ ֆինանսական վերլուծության իմացությունը:

Աշխատանքների հաջող իրականացման և քայլերի նկարագրման և հաջորդականության ապահովման նպատակով անչափ կարևոր է Աղբահանության և կոշտ թափոնների գործածության քարտեզագրումը:

Արդյունավետ լոգիստիկ լուծումներ գտնելու տեսանկյունից ԿԹ պլանավորման համար կարևոր է թափոնների գործածության օբյեկտների տեղակայման հստակ տեղեկատվությունը, ինչպես նաև վերջիններիս տեսողական վերապատկերումը քարտեզի վրա: Համակարգչային քարտեզագրման կարողությունների բացակայության դեպքում անհրաժեշտ է պլանավորման տարածքի տպագիր քարտեզի վրա կատարել համապատասխան նշումները և պատճենի տեսքով տեղադրել այս ենթաբաժնում:

ՏԿԵ նախարարության նախաձեռնությամբ մշակվել և փորձնական գործարկվել է մի քանի համայնքներում ծրագրային գործիք, որն աստիճանաբար նախատեսվում է ներդնել բոլոր համայնքներում: Գործիքը ներառում է պլանավորման տարածքում առկա թափոնառաջացնող բոլոր օբյեկտները, թափոնների գործածության համապատասխան տեսակները, կայանքները, աղբավայրերը, դրանց մոտեցնող ճանապարհները, աղբամանների տեղադրումները, մեքենասարքավորումները և այլն: Այն հնարավորություն է տալիս ծրագիրը սպասարկող աշխատակցին աղբահանության կառավարման համար անհրաժեշտ մեքենաներ, սարքավորումների, նյութերի ընտրությամբ, այլ անհրաժեշտ տեղեկատվության ներմուծման, ստանալու աղբահանության լավագույն սխեման, իրականացնելու գնումների և ֆինանսավորման պլանավորում, արդյունավետ վերահսկողություն աղբահանության գործընթացի նկատմամբ: Հրաշալի կլիներ այս գործիքը ևս ներդնել Դիլիջան համայնքում, որտեղ, համաձայն ծրագրի, իրականացման ընթացքի և արդյունքների, կան արձանագրված որոշ հաջողություններ՝ առանձնացված աղբահանության սկզբունքների ներդրման ուղղությամբ: Ուստի այս գործընթացների շարունակականության ապահովման ուղղությամբ տարածքային ցանկացած գործողություն կարող է ապահովել աշխատանքների իրականացման լիակատար հաջողությունը:

Թափոնների կայուն կառավարում ապահովելու կարևորագույն նախապայման է ինչպես բնակչության, այնպես էլ կառավարման համար պատասխանատու անձնակազմի իրազեկվածության անհրաժեշտ աստիճանը:

Պատասխանատուների իրազեկվածությունը կարևոր է՝ Պլանը մշակելիս խնդիրները գնահատելու, լուծման առաջնահերթությունները հստակ սահմանելու և հետևողական իրականացնելու համար:


Բնակչության իրազեկվածությամբ մեծապես պայմանավորված են սկզբնաղբի թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու, տեսակավորված հավաքածուների վերաօգտագործելու հաջողությունները, հետևաբար և Պլանի իրականացման հաջողությունը:

Իրազեկվածության աստիճանի գնահատման միջազգայնորեն հաջողված մեթոդ է բնակչության սոցիալական տարբեր խմբերում, տարբեր գործունեություն իրականացնող տնտեսվարողների, ինչպես նաև Պլանի մշակման և իրականացման համար պատասխանատու անձնակազմի շրջանում հարցումներ իրականացնելը նախապես մշակված հարցաշարերով: Հարցաշարերը պետք է ուղղված լինեն թափոնների կառավարման խնդիրների վերաբերյալ առկա գիտելիքների աղբյուրների, տեղեկացվածության, վերաբերմունքի և ակնկալիքների, ինչպես նաև թափոնների կառավարման առկա իրավիճակից բնակիչների և տնտեսվարողների գոհունակության աստիճանի գնահատմանը, ինչպես նաև պարունակեն տեղեկություններ այն լրացնողի/հարցվողի տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղվածության/ աշխատավայրի վերաբերյալ:

Ստորև տրվում են Ծրագրի շրջանակում Դիլիջան համայնքում շուրջ 60 բնակիչների շրջանակներում իրականացված հարցման արդյունքները:


«Որքանո՞վ է ներկայումս գործող տեղական քաղաքային թափոնների կառավարման համակարգն ապահովում շրջակա միջավայրի համարժեք պաշտպանությունը» հարցին Դիլիջան համայնքում (նկ. 3) հարցվածները պատասխանեցին հետևյալ կերպ. ապահովման մակարդակը ցածր է՝ 38%, միջին՝ 53% և բարձր՝ 3%:

1. Որքանո՞վ է ներկայումս գործող տեղական քաղաքային թափոնների կառավարման համակարգն ապահովում շրջակա միջավայրի համարժեք պաշտպանությունը



Նկ. 3

2. Արդյո՞ք Ձեր քաղաքում աղբահավաքման ծառայությունը պարտավոր է հավաքագրել թափոնները տեսակավորված ձևով, և արդյո՞ք այդ նպատակով համապատասխան վայրերում տեղադրված են թափոնների տեսակավորված հավաքագրման համար նախատեսված աղբամաններ




Նկ. 4

«Արդյո՞ք Ձեր քաղաքում աղբահավաքման ծառայությունը պարտավոր է հավաքագրել թափոնները տեսակավորված ձևով, և արդյո՞ք այդ նպատակով համապատասխան վայրերում տեղադրված են թափոնների տեսակավորված հավաքագրման համար նախատեսված աղբամաններ» հարցին (նկ. 4) հարցվածների մեծ մասը՝ 58%, չգիտեր՝ արդյո՞ք քաղաքային աղբահավաքման ծառայությունը պարտավոր է հավաքագրել թափոնները տեսակավորված ձևով, 21%-ը համարում է, որ քաղաքային աղբահավաքման ծառայությունը պարտավոր է, իսկ 21%-ը՝ ոչ:


Հարցին, թե «Արդյո՞ք թափոններում առկա վերամշակելի նյութերը տեսակավորվում և թափվում են աղբի տեսակավորված հավաքագրման համար նախատեսված աղբամաններում» համայնքում բացասական պատասխան տվեցին 75%-ը (նկ. 5):

3. Արդյո՞ք թափոններում առկա վերամշակելի նյութերը տեսակավորվում և թափվում են աղբի տեսակավորված հավաքագրման համար նախատեսված աղբամաններում



Նկ. 5

4. Ձեր տարածքում թափոնների ո՞ր տեսակներն են հավաքվում առանձնացված:




Նկ. 6

Դիլիջան համայնքում «Այո» պատասխանողների 48%-ը չկարողացավ նշել, թե իրենց տարածքում թափոնների որ տեսակներն են հավաքվում առանձնացված, 28%-ը նշեց պլաստիկը, իսկ 24%-ը՝ թուղթ/ստվարաթուղթը (նկ. 6):


Հարցին, թե «Նախորդ տարվա ընթացքում արդյո՞ք Ձեր կողմից ստորև նշված նյութերից որևէ մեկը հավաքվել և թափվել է տեսակավորված ձևով դրա համար նախատեսված հատուկ աղբամաններում», Դիլիջան համայնքի հարցված բնակիչների 39%-ը նշեց, որ տեսակավորել է պլաստիկը, 51%-ը՝ թուղթ/ստվարաթուղթը, իսկ 7%-ը՝ չպատասխանեց հարցին (նկ. 7):

5. Նախորդ տարվա ընթացքում արդյո՞ք Ձեր կողմից ստորև նշված նյութերից որևէ մեկը հավաքվել և թափվել է տեսակավորված ձևով դրա համար նախատեսված հատուկ աղբամաններում



Նկ. 7

6. Կարևորում էք արդյոք տնային տնտեսությունների կողմից թափոնների տեսակավորված հավաքումը, նույնիսկ, եթե դա կարող է պահանջել ավելի լավ կազմակերպում, աղբահանող ծառայությունների կողմից լրացուցիչ ներդրումներ և հավանաբար նաև ավելի բարձր սակագներ:




Նկ. 8

«Ինչպե՞ս եք գնահատում Ձեր քաղաքում վերամշակելի թափոնների տեսակավորված հավաքման կազմակերպումը (հավաքման կետերի և հաճախականության տեսանկյունից)» հարցին Դիլիջան համայնքում 25%-ը գնահատեցին կազմակերպումը վատ, իսկ 62%-ը չունեն ձևավորված կարծիք (No option պատասխան), (նկ.9):


Դիլիջան համայնքում հարցվողների 75%-ը (նկ. 8) կարևորում են «տնային տնտեսությունների կողմից թափոնների տեսակավորված հավաքումը, նույնիսկ, եթե դա կարող է պահանջել ավելի լավ կազմակերպում, աղբահանող ծառայությունների կողմից լրացուցիչ ներդրումներ և հավանաբար նաև ավելի բարձր սակագներ»:

7. Ինչպե՞ս եք գնահատում Ձեր քաղաքում վերամշակելի թափոնների տեսակավորված հավաքման կազմակերպումը (հավաքման կետերի և հաճախականության տեսանկյունից)



Նկ. 9

8. Գիտե՞ք արդյոք թե ինչ է տեղի ունենում կենցաղային թափոնների հետ աղբամաններից տեղափոխվելուց հետո:




Նկ. 10

Դիլիջան համայնքում հարցվածների միայն 25%-ը գիտի, թե «ինչ է տեղի ունենում կենցաղային թափոնների հետ աղբամաններից տեղափոխվելուց հետո», իսկ 50%-ը չգիտի/տեղեկացված չէ կենցաղային թափոնների հետագա ճակատագրից (նկ.10):


Դիլիջան համայնքում հարցվածների 81%-ը համաձայն է, որ *աղբահավաքման ծառայության հարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տեսակավորված եղանակով հավաքված աղբի քանակը (որքան շատ աղբ է հավաքվում տեսակավորված եղանակով, այնքան քիչ են վճարում)*, 13%-ը չկարողացավ պատասխանել, և միայն 6%-ը համաձայն չէ (նկ.11):

9. Համաձայն էք արդյոք որ աղբահավաքման ծառայության հարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տեսակավորված եղանակով հավաքված աղբի քանակը (որքան շատ աղբ է հավաքվում տեսակավորված եղանակով, այնքան քիչ են վճարում):



Նկ. 11

10. Ներկայումս գործող տեսակավորված աղբահավաքման համակարգը արդյունավետ է գործում:




Նկ. 12

Հարցվածների 41%-ը (նկ.12) կարծում է, որ *ներկայումս գործող տեսակավորված աղբահավաքման համակարգը արդյունավետ չի գործում:*

Աղբի տեսակավորված հավաքման արդի համակարգի անարդյունավետության պատճառներն են ըստ Դիլիջան համայնքում հարցված բնակիչների (նկ.13).


- ✓ Տեսակավորված հավաքման աղբամանների տեղադրվածությունը՝ 19%:
- ✓ Տեսակավորված հավաքման աղբամանների հասանելիությունը՝ 23%:
- ✓ Քաղաքացիների կողմից հետաքրքրության պակասը՝ 18%:
- ✓ Քաղաքացիների տեղեկացվածության / գիտելիքի պակաս՝ 28% :
- ✓ Այլ՝ 12%:

11. Աղբի տեսակավորված հավաքման արդի համակարգի անարդյունավետության պատճառներն են:



Նկ. 13

12 Ի՞նչ եք կարծում, կենսաբայթայվող թափոնները անհրաժեշտ է կոմպոստավորել:



Նկ. 14

Դիլիջան համայնքում հարցվողների 65%-ը (նկ.14) *կարծում են, որ կենսաբայթայվող թափոններն անհրաժեշտ է կոմպոստավորել*: Հարկ է նշել, որ հարցվողներից ոչ ոք չէր ճանաչում մարդկանց, ովքեր վերամշակում են այդպիսի թափոնները:

Հիմք ընդունելով հարցումների արդյունքում ստացված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ թափոնների կառավարման, տեսակավորման մասին բնակչության գիտելիքների և իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով երկու համայնքում էլ անհրաժեշտ է՝

- ✓ իրականացնել թափոնների տեսակավորմանն ուղղված փորձագուցադրական ծրագրեր՝ հաշվի առնելով եվրոպական լավագույն փորձի ներդրման սկզբունքները:
- ✓ Կազմակերպել իրազեկման մակարդակի բարելավմանն ուղղված դասընթացներ և փորձի փոխանակման միջոցառումներ:

Պակաս կարևոր հարց չէ նաև Պլանավորման տարածքում իրականացման ֆինանսատնտեսական նկարագիրը, որը կներառի նաև Աղբահանության եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագրությունը: Ցավոք, այստեղ նույնպես առկա են ոչ բավարար տվյալներ, բացառությամբ EU BSB 1138 ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների ֆինանսական բաղադրիչների:

Իրականացված աշխատանքների գնահատման նպատակով կարևորվում է նաև նրանց նկատմամբ մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության գործառույթների պարտադիր իրականացումը:

Յուրաքանչյուր ծրագրի արդյունավետությունն ապահովելու կարևոր գործիք է մշտադիտարկումն ու արդյունքների գնահատումը, ուստի այն Պլանի պարտադիր բաղկացուցիչ մասն է:

Այս բաժնում պետք է գնահատական տրվի նախկին պլանավորման ժամանակ սահմանված նպատակների իրագործմանը: Այն դեպքում, երբ Պլանը համայնքում առաջին անգամ է ներդրվում, որպես «նախկինում սահմանված նպատակներ»՝ արդյունքների գնահատման համեմատության հիմք, կարող են հանդիսանալ Ռազմավարությամբ սահմանված թիրախները:

Կոշտ կենցաղային թափոնների կառավարման պլանների կազմման գլխավոր նպատակներն են.

- ✓ սկզբնաղբյուրում թափոնների առաջացման կրճատումը,
- ✓ աղբավայրում (ներառյալ սանիտարական) տեղադրվող թափոնների քանակի կրճատումը:

Պետք է սահմանվեն նաև թափոնների գործածության հետևյալ ձևերին առնչվող թիրախային ցուցանիշները.

- ✓ տեսակավորված հավաքում,
- ✓ խառը հավաքում և տեսակավորում,
- ✓ վերամշակման և օգտահանման աճ,
- ✓ վտանգավոր թափոնների վնասագերծման ու չեզոքացման կրճատում,
- ✓ աղբավայրում, այդ թվում՝ սանիտարական աղբավայրում տեղադրվող թափոնների քանակի կրճատում:

Եթե պլանավորման տարածքում՝ Դիլիջան համայնքում, աղբի հավաքման ծածկույթը 100% չէ, բնակչության որոշակի մաս, օրինակ՝ 25%, որը դեռևս չի ստանում աղբի հավաքման ծառայություն, ապա պարտադիր պետք է սահմանել նպատակը, օրինակ՝ 2 տարվա ընթացքում աղբի հավաքման ծառայություն ստացող բնակչության տոկոսը 75%-ից հասցնել 90%-ի, իսկ 1 տարի անց՝ 100%-ի:

Համայնքում, զբոսաշրջային ակտիվությամբ պայմանավորված, չտեսակավորված կենցաղային թափոնների կազմում մեծ է պլաստիկի ու ապակե տարաների քանակը, ուստի թիրախ է սահմանվել՝ ապահովել պլաստիկի և ապակու տեսակավորված հավաքում (առաջիկա 2 տարիների ընթացքում /կարճաժամկետ պլանավորում/, իսկ առաջիկա 5 տարիների ընթացքում նշված տեսակների տեսակավորված հավաքումը հասցնել 50%-ի յուրաքանչյուրի ընդհանուր քանակից և ապահովել հավաքված ամբողջ քանակի վերաօգտագործում կամ նյութի օգտահանում /միջնաժամկետ պլանավորում/: Եթե Դիլիջան համայնքի առանձնահատկություններից ելնելով՝ առաջացած թղթի/սովարաթղթի անվադողերի և շինարարական աղբի քանակը համեմատաբար փոքր է, սակայն դրանց տեսակավորված հավաքումը համայնքը համարել է միջին առաջնահերթություն և սահմանել թիրախ՝ առաջիկա 5 տարիների ընթացքում ապահովել դրանց 50%-ի (յուրաքանչյուրի ընդհանուր քանակից) տեսակավորված հավաքում և հավաքված ամբողջ քանակի վերակիրառում (օրինակ՝ շինարարական աղբով աղբավայրի ծածկում), նյութի օգտահանում (օրինակ՝ թղթի/սովարաթղթի վերամշակում) կամ վերացում (օրինակ՝ անվադողերի կիզում /միջնաժամկետ պլանավորում/:

Թիրախներ սահմանելիս անհրաժեշտ է նաև նշում կատարել դրանց հասնելու համայնքի կարողությունների մասին՝ համայնքի կարողությունները բավարար՞ են, թե՞ ոչ:

6. ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԿԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

(ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՈՒՄ)

- ✓ Աղբի տեսակավորված հավաքման կարողությունների զարգացում:
- ✓ Ստեղծել աղբի տարբեր տեսակների հավաքման կետեր, որոնք հասանելի կլինեն, բացի օպերատորից, նաև կազմակերպությունների ու քաղաքացիների համար:
- ✓ Աղբահանության սխեմաների կազմումն իրականացնել՝ հաշվի առնելով փոխաբեռնման կայանների անհրաժեշտությունը, որտեղ ժամանակավոր կհավաքվի, կսեղմվի և/կամ կտեսակավորվի աղբը, ինչն իր հերթին կնվազեցնի երթևեկության ծանրաբեռնվածությունը և ծախսերը:
- ✓ Օպերատորների կարողությունների զարգացում՝ անձնակազմի վերապատրաստման, հանրային իրազեկվածության բարձրացման և լոգիստիկայի աղբահանության սխեմաների վերանայման:
- ✓ Համայնքում թափոնների տեսակավորման, վերամշակման, օգտահանման թիրախային ցուցանիշներին հասնելու համար անհրաժեշտ են թափոնների կայուն կառավարման բազային գիտելիքներ և գործառնական հմտություններ: Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման համար պատասխանատու անձնակազմի կարողությունների զարգացում դասընթացների, վերապատրաստումների, հավաստագրման և այլ միջոցներով:

Աղբավայրեր և աղբանոցներ: Աղբահանության և ԿԹ տեղական կառավարման բարելավումը ներառում է նաև գործող աղբավայրերի և դրանց առնչվող ենթակառուցվածքների բարելավումը:

- ✓ Աղբավայր հեռացվող թափոնների քանակի հստակ տվյալներ ունենալու համար, այդ թվում՝ ընդհանուր աղբի գոյացման տվյալների և ֆինանսատնտեսական վերլուծությունների համար անհրաժեշտ է աղբավայրերում տեղադրել կշեռքներ:
- ✓ Անհրաժեշտ է բարեկարգել աղբավայրը՝ ցանկապատելով, արգելելով կոդմակի անձանց, ինչպես նաև կենդանիների մուտքը աղբավայր, բարեկարգել աղբավայր տանող ճանապարհները՝ մեքենամեխանիզացիայի շահագործումն ապահովելու նպատակով:
- ✓ Աղբավայրում կատարել տեղադրվող աղբի հաշվառում:
- ✓ Ներդնել թափոնների ընդունման և մերժման ընթացակարգեր և ենթակառուցվածքներ:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պլանի մշակման ժամանակ կարճաժամկետ և միջնաժամկետ թիրախներ սահմանելիս անհրաժեշտ է դրանք դիտարկել երկարաժամկետ զարգացման համատեքստում՝ թափոնների կառավարման կայունությունը երաշխավորելու նպատակով: Այդ իմաստով ՏԻՄ-երի՝ Պլանով սահմանված բոլոր թիրախները պետք է բխեն ՀՀ կառավարության կողմից որդեգրված քաղաքականությունից՝ աղբահանության համակարգի ռազմավարությունից՝ միաժամանակ չսահմանափակվելով երկարաժամկետ զարգացումների համար կարգավորման առաջարկություններ ներկայացնելու անհրաժեշտությամբ:

7. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Այս բաժնում ներկայացվում են ԿԿԹ կառավարման պլանում սահմանված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրները՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով:

ա) Կարճաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում

Կ/հ	Սահմանված թիրախ	Միջոցառման անվանում	Միջոցառման արժեք (հազ. դր.)	Ծախսերն ըստ պլանավորման կարճաժամկետ ժամանակահատվածի համար		Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ					Նշումներ
				1-ին տարի (հազ. դր.)	2-րդ տարի (հազ. դր.)	Ինքնաձեռնարկով ծածկում (հազ.դր.)	Համայնքային բյուջե (հազ. դր.)	Պետական բյուջե (հազ. դր.)	Դոնոր կազմակերպություն (հազ. դր.)	Օպերատորի/ ՀՈԱԿ-ի բյուջե (հազ. դր.)	
1	Քաղաքի տարածքի 40% աղբի տեսակավորված հավաքման կարողությունների զարգացում	Առանձնացված աղբահանության արկերի տեղադրում համայնքի վարչական շենքերում (40 հատ)	6000								

7.1. Միջնաժամկետ միջոցառումների բյուջե և ֆինանսավորում

h/h	Սահմանված թիրախ	Միջոցառման անվանում	Միջոցառման արժեք (հազ. դր.)	Ծախսերն ըստ պլանավորման միջնաժամկետ ժամանակահատվածի համար			Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ					Լշումներ
				3-րդ տարի (հազ. դր.)	4-րդ տարի (հազ. դր.)	5-րդ տարի (հազ. դր.)	Բնօրինակաձևային ծածկում (հազ.դր.)	Համայնքային բյուջե (հազ. դր.)	Պետական բյուջե (հազ. դր.)	Դոնոր կազմակերպություն (հազ. դր.)	Օպերատորի/ ՀՈԱԿ-ի բյուջե (հազ. դր.)	
1												
2												
....												
Ընդամենը												

7.2. Առանձին միջոցառումների մանրամասն աշխատանքային պլան և բյուջե

Միջոցառում	Կապիտալ ներդրումներ	Գործառնական ծախսեր	Այլ ծախսեր /մանրամասնել նշումների մեջ/	Լշումներ

**ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետվությունը ներկայացվում է աղբահանության ոլորտի լիազոր մարմնին պլանավորման ժամանակաշրջանի 2-րդ և 4-րդ տարվա ավարտին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հաշվետվության ամփոփագրից առաջ ներկայացվում են հետևյալ ընդհանուր տեղեկությունները

Հաշվետվության անվանում	
Պլանավորման մեջ ընդգրկված համայնքներ/ բնակավայրեր	
Հաշվետվության տեսակ	
Հաշվետվությունը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	
Հաշվետվությունը կազմող անձանց էլ. հասցե, հեռախոս	
Հաշվետվության պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլ. հասցե	

**ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԼԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Այս բաժնում պետք է նկարագրվեն ընթացիկ պլանում փոփոխման ենթակա կետերը՝ վերջիններիս հիմնավորման հետ մեկտեղ: